ԿԱՆՈՆ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄՈՒ ԱՂՕԹԻՑ

Ոչ կարելի է վերայ ծանր ձիանալոյ,
և բժշկանին զատոյ՝ և է տառանին
յանգանալոյ։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն։
Հայր մեր որ յերկինս։

Աստուա՛ծ, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցին ինձ և հանցին զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո։ Մարիա առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։ Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած, Աստուած իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսայ առ Աստուած, խոստովանիցիս նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ։

եւ ես խաղաղութեան։ Արդարութիւն և փառք։

Անկեսցէ ի վերայ իմ ողորմութիւն քո,
Տէր, և փրկութիւն քո ըստ բանի քումբ։
Տաց պատասխանի այր նախատողն զիս
բանիւբ, զի ես ի բանս քս յուսացայ։
Մի՛ ի բացեայ առնիր ի բերանոյ իմմէ
զբան ճշմարտութեան մինչև յոյժ, զի
յիրաւունս քս յուսացայ։
Պահեցի զօրէնս քս յամենայն ժամ, յա-
ւիտեան և յաւիտեանս յաւիտենից։
Գնացի ես յանդարձու, զի զպատուիրանս
քս խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քս առաջի թագա-
ւորաց, և ոչ ամաչէի։
Խորհէի ի պատուիրանս քս զոր սիրեցի։
Համբարձի զձեռս իմ ի պատուիրանս քս
զոր սիրեցի, և խորհէի յարդարութեան
քումբ։
Յիշեա՛ զբան ծառայի քս, յոր և յուսա-
ցուցեր զիս։
Սա մխիթարեսցէ զիս ի խոնարհութեան
իմումբ, զի բան քս կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ,
այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։
Յիշեցի զիրաւունս քս յաւիտենից, Տէր,
և մխիթարեցայ։

Տրամաբիւն կալաւ զիս ի մեղաւորաց՝ և
այլ թողին զօրէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո, ի տեղւոջ
պանդխտութեան իմոյ։
Յիշեցի ի գիշերի զանուն քո, Տէր, և
պահեցի զօրէնս քո։
Սա եղև ինձ ճանապարհ ի կեանս. զի
զարդարութիւնս քո խնդրեցի։
Զանօրէնս ասեցի, և զօրէնս քո սիրեցի։
Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես ի
բանս քո յուսացայ։
Ի բաց եղիարուք յինէն չարք, և քննեցից
զպատուիրանս Աստուծոյ իմոյ։
Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս.
և մի՛ յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։
Օգնեա՛ ինձ. և ապրեցո՛ զիս. և խորհե-
ցայց յիրաւունս քո յամենայն ժամ։
Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբ
եղեն յարդարութենից քոց. զի անիրա-
ւութեամբ էին խորհուրդք նոցա։
Յանցաւորս համարեցայ զամենայն մեղա-
ւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զբ-
պատուիրանս քո։
Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ.
զի ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։
Մերձեցին խնդրուածք իմ առաջի քո,

Տէր. ըստ բանի քում իմաստուն արա՛ զիս։
Մտցեն ողորմք իմ առաջի քո, Տէր, և բանիւ քում փրկեա՛ զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամենայն պատուիրանք քո արդարութեամբ են։
Եղիցի ձեռն քո ի կեցուցանել զիս, զի զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութեան քում, Տէր, և օրէնք քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ, և իրաւունք քո օգնեսցեն ինձ։
Տա՛ր զօրութիւն ծառայի քո, կեցո՛ զարդի ողորմեալ քո, և արա՛ առ իս նշան բարութեան։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու, Տէր, օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս։
Փառք Հօր և Որդւոյ և Այժմ և միշտ և։

ՄԱՂԹԱՆՔ

Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ, և ի սուրբ խաչ քո յուսացեալ եմ,

թագաւոր երկնաւոր. զբազմութիւն սրբոց քոց բարեխօս ունիմ առ քեզ, որ երկայնամիտ ես առ ամենեսեան, մի՛ անտես առներ զապաւինեալս ի քեզ. այլ պահեա՛ պատուական և սուրբ խաչիւ քով ի խաղաղութեան։

Ալէլուիա, ալէլուիա։

Ես ասացի ի վերանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացի ես ի դրունս դժոխոց։ Թողի զամենայն յետին իմ, և ասացի՝ թէ այլ ևս ոչ տեսից զփրկութիւն Տեառն յերկրին կենդանեաց, և ոչ ևս տեսից զմարդ բնակչօք իւրովք հանդերձ։ Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ. այսուհետև թողի, լքի զամենայն զկեանս իմ։ Եկ, գնաց, մեկնեցաւ յինէն հոգի իմ, որպէս այն՝ որ քակէ զտաղաւար, և եղէ ես որպէս զոստայն ատտարաց մերձ ի հատանիլ։

Ցաւուր յայնմիկ մատնեցայ ես յառաւօտէ որպէս ի ձեռս առիւծու. այնպէս խորտակեաց մանրեաց զոսկերս իմ, զի յառաւօտէ մինչ ի գիշեր մատնեցայ։

Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի, որպէս

գոգաւոր՝ այնպէս մեծի, զի նուազեցան
ոչ իմ ի տեսանելոյ։

Հայեցայ ի բարձունս ու Տէր Աստուած
իմ՝ որ փրկեաց զիս, և փարատեցոյց
յինէն զցաւս անձին իմոյ։

Տէր, զաստ ոյսրիկ պատմեցաւ. փեղ-
գարեալեալեր զանձն իմ, զարձուցեր զնոգի
իմ, մխիթարեցոյ և կեցի։

Ահա ի խաղաղութիւն զարձաւ զանձն իմ
իմ. փրկեցեր զանձն իմ, զի մի՛ կորիցոյ.
և բնակեցեր յետոյ զամենայն զմեզս իմ։

Զի ոչ թէ որք ի զժոխս են, խոստովան
տան քեզ. և ոչ մեռեալք օրհնեա-
ցին զքեզ. և ոչ յուսացին ի ճշմարտու-
թիւնս քո ամենեքեան, այլ քեզանեն ի
զժոխս։

Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ, Տէր.
որպէս և ես այսուհետեւ մինչեւ ծնայց,
որք պատմեսցին զարդարութիւնս քո՝
Տէր փրկութեան իմոյ։

Ես ոչ ես զպատարագիս օրհնել զքեզ յօրհ-
նութիւն նոր զամենայն աւուրս կենաց
իմոց յանդիման տաճարիդ Աստուծոյ։

Փառք Հօր և Որդւոյ և Այժմ և միշտ և։

ՄԱՂԹԱՆՔ

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն

փրկութեան, Տէր Յիսուս Քրիստոս. փրկեա
և փարատեցո զդատս անձին իմոյ։
Մարդասէր Տէր, զոսն սրբութեանդ անա-
բասի մեր քո և կուսի, և զոսն խաչի
քոյ պատուականի, Տէր, ընկալ զաղա-
չանս մեր, և կեցո զմեզ։

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Եւ ես վասն հիւանդիս (այս անուն) որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն Աստուծոյ՝ և զողորմութիւն նորա ի յոգնութիւն և ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ իւրոյ. որպէսզի ապրեսցի և կեցցէ, և վերատին նորոգեսցի քահանայական աղօթիւք ձեռամբք՝ և կարողութեամբն Աստուծոյ, զՏէր աղաչեսցուք։

Զամենասրբուհի զԱստուածածինն՝ զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք։

Եւ ես միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք։

Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։ Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Տէր, *որ ողորմութեամբ քով բժշկես զբեկումն հոգւոյ և մարմնոյ մերոց. բժշկեա զամենայն ախտս և զհիւանդութիւնս հոգւոյ և մարմնոյ* (այս անուն) *ծառայի քո. զի քո է ողորմիլ և կեցուցանել, Աստուա՛ծ մեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւ։

Ողորմեա *ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթու-*

Թեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ,
և ի մեղաց իմոց սուրբ արա զիս։
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ,
և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։
Քեզ միայն մեղայ, Տէր, և չար առաջի
քո արարի։
Որպէս արդար եղիցիս ի բանս քո, և
յաղթող ի դատել քեզ։
Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ
զիս մայր իմ։
Դու, Տէր, զճշմարտութիւն սիրեցեր,
զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ
քով յայտնեցեր ինձ։
Ցօղեա յիս մշակաւ և սուրբ եղէց, լուա
և քան զձիւն սպիտակ եղէց։
Լսելի արա ինձ զյնծութիւն և զուրա-
խութիւն, և ցնծասցին ոսկերք իմ առ-
ուապեալք։
Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զա-
մենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։
Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած,
և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։
Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց,
և զՀոգի քո Սուրբ մի՛ հաներ յինէն։
Տուր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և
հոգւով պատութեան քոյ հաստատեա զիս։

Աստուցից անօրինաց զամենապարտս քս,
և ամբարիշտք առ քեզ դարձցին։
Փրկեա զիս յարենէ, Աստուած, Աստուած.
փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ
յարդարութեան քում։
Տէր, եթէ զչարութեան իմ բանան, բերան
իմ երգեսցէ զարդարութիւնս քս։
Թէ կամեցեալ էիր, պատարագս մատու-
ցանէաք, բայց զաս ընդ ողջակէզս իսկ
ոչ հաճեցար։
Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, բա-
սիրս սուրբ և զհոգի խոնարհ Աստուած
ոչ արհամարհէ։
Բարի արա, Տէր, կամօք քովք Սիոնի,
և չինեսցին պարիսպքն Երուսաղէմի։
Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս ար-
դարութեան, յարժամ ուխտից պատարագս
հանցեն ի սեղան քս զուարակս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ։ Այժմ և միշտ և։

ՇԱՐԱԿԱՆ

Ա.Զ. Հայր բարձրելոցդ իսուտասանեմ առ քեզ որդեակս դա-
նուտակ որդիս. լիներ ինձ ըստ
ձեզս քո՛մ, և ոչ՝ քոմ։

Տէր որ գրեմ՝ցոյց ի կիրսն Բա-
նաւանացի, գրեմ՝ և յիս ի մե-
զանա՛ն՝ց, և ողորմեսցի։

Տէր որ գործա՛ցէր բրմութան՝
սոյն ի գիտութիւն ճշմարտա՛-
ութեան, գործա՛ և զիս բրմ-
մալոյսեա՛ց, և ողորմեսցի։

Յոյս եւ յուսամիտութիւն ապրի
մարգկան Բրիտանիս Ա՛ստրա-ած,
զնիս անեղ ամիտութիւն դոգ-
ոյ իմոյ կենդանացս արարչ երբեմն
զՆ՝զեկիսցի։

Զչարչարանս և բրմանդ յանձն
առեր կենդանատու ամենե-
ցուն. զնիս անեղ ամիտութիւն դոգ-
ոյ իմոյ անարգացս արարչ երբ-
եմն զՆ՝զեկիսցի։

Ա՛ռ քեզ սարսա՛ռիմք խորհա՛ն եւ տանջա՛ր Աստուծոյ բանի՛ն Մարիամ մայր եւ՝ կոյս, բարեխօսեա՛ սա. Քրիստոս վասն անձա՛ն մերոյ։

ՔԱՐՈԶ

Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, և իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի որդւոյ քո և աղաչանօք ամենայն սրբոց քոց. լուր Տէր և ողորմեա, ներեա, քաւեա և թող զմեղս մեր. արժանաւորեա զոհանալով փառաւորել զքեզ ընդ Որդւոյ

և ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից։

Ալէլուիա, ալէլուիա։

Ես ասացի, Տէր, ողորմեա ինձ, բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։
Երանի որ խորհի զաղքատն և զանտանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր։

Յակոբու առաքելոյն ի Կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Խոստովան եղերուք միմեանց զմեղս, և աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէսզի բժշկեսջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօգնականութիւն։
Եղիա մարդ էր իբրև զմեզ չարչարելի, և յաղօթս եկաց, և ոչ տեղեաց յերկիր զերիս ամս և զվեց ամիս։
Եւ դարձեալ եկաց յաղօթս՝ և եռաւն երկինք զանձրև և բուսոյց երկիր զպտուղ իւր։
Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճանապարհէ ճշմարտութեան, և դարձուսցէ ոք զնա, գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր

ի մանուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց։

Ալէլուիա, ալէլուիա։

Տէր, մի՛ սրամտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։

Ողորմեա ինձ, Տէր, զի հիւանդ եմ ես, բժշկեա զոսկրս իմ, զի խռովեցան ոսկերք իմ։

Ալէլուիա, Օրթիս։

Խաղաղութիւն ամենեցուն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Երկիրպագութեամբ լուարուք։

Արդոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Գոսպոտէ։ Առ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Աշակերտ առ ինքն զկերկուսանսն, եւ սկսաւ առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխանութիւն ի վերայ այսոց պղծոց։

Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ինչ բարձցեն ի ճանապարհն, բայց միայն զաւազանն. մի՛ պարկ, մի՛ հաց, մի՛ պղինձ ի գօտիս.

այլ ապառնել հոգաթափս, և մի՛ զվնասցուք ասէ՝ երկուս պարիզաս։
Եւ ասէր ցնոսա. յոր առնէ՛ մասանիցէք, անդէն օթևարան կալջիք՝ մինչև երանիցէք անտի։
Եւ որ ոչ ընկալցին զձեզ, և ոչ լուիցեն ձեզ, յորժամ երանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի ոտից ձերոց ի վկայութիւն նոցա։
Եւ եկեալ քարոզէին զի ապաշխարեսցեն. և զեւս բազումս հանէին և օծանէին իւղով զբազումս հիւանդս, և բժշկէին զնոսա։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, . .
Տէ- յէրէ- 103։

Իսկ մեք փառաւորեսցուք զոր յառաջ քան զյաւիտեանս. երկիր պագանեմք Սրբոյ։

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան զՏէր ապաչեսցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հաւ և Որդւոյ և Հոգ։

Ողորմեա՛ ինձ, Աստուած, բան մեծի ո-

զոքմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

ՀԻՆԳ ԵՐԵՍ

ՇԱՐԱԿԱՆ

Ա.Կ. Ծո՛վ կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ։
Մրրիկեալ ալիք թշնամի՛ն ինձ յարուցանէ։
Նաւապետս բարի՛. լեր անձի՛ն իմոյ ապա՛հէն։
Աղաչեցի՛ ըղձապնդմամբ Աստուած, և լուա՛ ձայնի խլնդրութեանց իմոց. զի նուաղեցան աչք իմ ի տեսանելոյ, և յինէն փարատեցան զցաւս անձի՛ն իմոյ։
Զիմաստուո՛ր ելն Գլխատոս բա-

ութեան նեցէք. որ ի յանձն էառ ըզմահ խաչի եւ խորհանեաց ըզմահն թագաւորութիւնն.

և յինէն փարատեցոյց։ Փութացի՛ր յօգնութիւն սուրբ Աստուածածնի. և աղաչեա՛ զսա ի քէ՛ն ըզմարմնացեալ բանն Աստուած. զի յահաւոր եւ ի մեսանգամ գալստեանն իւրոյ պարգևեսցէ մեզ ըզկեա՛նսն յաւիտե՛նից։

ՔԱՐՈԶ

Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, և իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

ԱՂՕԹՔ

Ընկալ Տէր զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Ալէլուիա, ալէլուիա։

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցի։
Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո սրպէս անապակ սրբեցոյց զիս։

Յովհաննու Աստուածաբանի Կարգուցիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Սիրելիք, եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խաբեմք. և ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ։
Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար, տա ի թողուլ մեզ զմեղս մեր և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։
Եթէ ասիցեմք՝ եթէ ոչինչ մեղաք, սուտ առնեմք զնա, և բան նորա ոչ է ի մեզ։
Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատ։

Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ միայն մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի։
Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահիցեմք։
Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է, և ճշմարտութիւն ի նմա ոչ կայ։
Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարև ի նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ ի նմա եմք։
Որ ասիցէ ի նմա բնակել, այնպէս պարտի զնալ՝ որպէս նոյն զնաց։

Ալէլուիա, ալէլուիա։

Զայնիւ իմով ես աստ գոչի, Տէր, կարդացի, ձայնիւ իմով առ Աստուած. և նայեցաւ առ իս։
Բաւուր նեղութիւնս իմոյ զԱստուած խրոխտիցի ձեռամբ իմովք. և ի գիշերի առաջի նորա ոչ խորհիցայ։

Ալէլուիա, Օրհնեա։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ զնոր հոգւոյդ քաւեմ։
Երկիւղածութեամբ լուարուք։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Ղուկասու։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Գոսպոմէ։ Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Եւ մտեալ էրջէր ընդ երիքով. և ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն. և խնդրէր տեսանել՝ թէ ո՞վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։

Եւ ընթացեալ յառաջս, ել ի ժանտաթզենին զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։

Իբրև եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա. Զաքէ, փութա էջ այսի, զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանել. փութացաւ և էջ, և ընկալաւ զնա ուրախութեամբ։

Իբրև տեսին ամենեքին, արտնջէին և ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։

Եկն եկաց Զաքէոս, և ասէ ցՏէր. ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։

Եւ ասէ ցնա Յիսուս. այսօր եղև փրկու-

Թիւն տանս այսմիկ. քանզի և սա որդի Աբրահամու էր։
Զի եկն Որդի Մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Եւ ևս վասն հիւանդիս (այս անուն) որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Անակիզքն Աստուած՝ սուրբդ սրբոց, որ զմիածին քո Որդիդ առաքեցեր բժշկել զամենայն ախտս հոգւոց և մարմնոց մերոց. առաքեա զՀոգիդ քո սուրբ, և սրբեա (զայս անուն) ծառայս քո, և ազատեա յամենայն մեղաց. զի ողորմած ես և զթած։ Եւ քեզ փառս մատուցանեմք ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ

Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան վՏէր աղաչեցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Վիճակն ըստ սահմանի։ (Տես յերես 150–152)։

ՇԱՐԱԿԱՆ

ԲՁ. Մեղա՛ք մինչև յերկի՛նս և զա՛մբարտ պյատա՛ւմբն քո՛ շարժե՛ցաք ի մե՛զ։ Տէ՛ր ըստ մեծի քում ողորմութեա՛նդ, ողորմեա՛ մե՛զ։

Ինքա՛ք մինչ ի դըժոխս ընկեալ մեռա՛ք յանծրէ՛նութեան մեր։ Տէ՛ր յիշեա՛ զդիս որ-

եան Որդւոյ քո և սրբոյն։
Հաստատեա ի մէնջ Տէր նեղան-
նա՛ խաչի քո զքեզ զիմանալոյս
և զանեղեալսն գոգանեն. էլ մի
տար յապականութիւն զքո
ժառանգութիւնս։

Զէզեկիայեն քեզ՞ մոգիմեմ
հառաչմանբ սրտի իմոյ, որ
վանեն իմ խոնարհեցար ի յերբ-
կնից. յոյս կենդանութեա՞ն
և փրկութեան իմոյ Տէր։

Ո՞ր ի խաչին բարձեր ըզդատա-
կնիք մահու, տարածելով ըզ-
բազուկսս քո. արձակեա և զիս
ի կապանաց բանտարկութեն. յոյս
կենդանութեա՞ն։

Ո՞ր յամենայն աղգաց երամ՝ նեցար սրբութի և կոյս Մարիամ. աղաչեա զսուրբ ի քէն ըզմարմնացեալն Աստուած, ապրեցուցանե՛լ ըզմեզ ի սպասնալեաց գեհենոյն։

ՔԱՐՈԶ

Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, և իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Ալէլուիա, ալէլուիա։

Բարձր առնեմ զքեզ, Տէր, զի ընկալար զիս. և ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս։

Տէր Աստուած իմ կարդացի առ քեզ և բժշկեցեր զիս. Տէր, հաներ ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ի գուբ։

Գողոսի առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ թղթոյն է ընթերցուածս։

Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք. որպէս ասաց Աստուած, թէ բնակեցայց ի նոսա, և գնացից ի նոսա. և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդք։

Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ Տէր. և ի պիղծս մի՛ մերձենայք. և ես ընկալայց զձեզ. և ես եղէց ձեզ ի Հայր, և դուք եղիջիք ինձ յուսաներս և ի դստերս, ասէ Տէր ամենակալ։ Իսկ որովհետև զայս ունիմք։ սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ։

Ալէլուիա, ալէլուիա։

Երանի որ խորհի զաղքատն և զանտանկն, յաւուր չարի փրկէ զնա Տէր։

Ալէքսիա, Օրթի։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութեամբ լուարուր։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի
որ ըստ Մարկոսի։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Գոսխուտէ։ Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զնա նորա, և նեղէին զնա։
Եւ կին մի էր ի տեառտեսութիւնն արիւն զերկոտասան ամ, և յոյժ վշտացեալ ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն, և չէր ինչ օգտեալ, այլ ևս առաւել զոյրացեալ։
Երբև լուաւ զՅիսուսէ, եկն ի մէջ ամբոխին յետոյ՝ և բաւն եհար զհանդերձ նորա. քանզի խորհէր ի մտի, թէ միայն մերձեցայց ի հանդերձս նորա՝ փրկեցայց։
Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արիւն նորա. և գիտաց ի մարմնին իւր՝ թէ բժշկեցաւ ի տանջանացն։
Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն որ ել ի նմանէ.

զարձաւ յամբոխն և ասէ. ո՞վ մերձեցաւ
ի հանդերձս իմ։
Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես զի
ամբոխք հեղձեն զքեզ. և ասես թէ ո՞վ մեր-
ձեցաւ ի հանդերձս իմ։
Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն
արար։
Եւ կինն զարհուրեալ և զդողացեալ վասն
որոյ զգաւն արար. քանզի գիտէր զինչ
եղև նմա. եկն՝ անկաւ առաջի նորա, և
ասաց զամենայն իրսն ստուգութեամբ։
Եւ Յիսուս ասէ ցնա. զուստր, հաւատք
քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղու-
թիւն, և եղիջիր ողջ ի տանջանաց քոց։

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութիւն զՏէր աղաչեցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկ-
ութեան անձանց մերոց, զՏէր աղաչես-
ցուք։

Տէր ողորմեաւ։

Եւ ես վասն հիւանդիս (–ց– անուն) որ յաւ-
ացեալ է կոչել զանուն Տեառն, զՏէր
աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Աստուած մեծ և սքանչելագործ, որ պահես զուխաս քո, և տաս զողորմութիւն սիրելեաց քոց, և զթողութիւն մեղաց ի ձեռն սրբոյ Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի. որ նորոգեաց զմեզ ի մեռելութենէ մեղաց մերոց։ Դու ես որ լուսաւոր առնես զկոյրս, և կանգնես զանկեալս։ Դու հաներ զմեզ ի խաւարէ և ի ստուերաց մահու, ասելով ցկապեալս՝ թէ ելէք, և որք ի խաւարին՝ թէ յայտնեցարուք. յորս ծագեաց լոյս զիտութեան օծելոյ քո, որ եկն երևեցաւ յերկրի, և ընդ մարդկան շրջեցաւ. և որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել։ Դու, Տէր, փրկական աւազանին վերստին ծննդեամբն զորդեգրութիւն մեզ շնորհեցեր, և հաղորդս արարեր զմեզ սուրբ անուան նորա։ Դու ինքն, Տէր ամենայնի, նայեա (յայս անուն) ծառայ քո, զի փրկեալ ի մեղաց, եղիցի արդարացեալ ի քեզ,

զգեցեալ զՏէր մեր Յիսուս Քրիստոս։ Զի ողորմած և մարդասէր Աստուած ես, և քեզ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ

և։ Եւ խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ Զիարդ ՀՄՆ ԱՍԱ։ (Տե՛ս էջէ՛ 150–152)։

ԵԱՐԱԿԱՆ

Բկ. Յամենայն ժամ ապաշնանք իմ այս է՛ն. ի մեղաց իմոց սա՛ւրբ սրտա՛ զիս Տէր։

Յանցանաց իմոց զարիսնա՛ւրմ սիրտ իմ. ապաշեմ զքեզ Լծա՛ղ ինձ Տէր։

Արտասուաց խմոց մի լաւեր
Տէր, զի պանդուխտս եմ ես
յանցանաւոր երկրի։
Անմահ թագուհւոյ որ կամիս
ըզկեանս ամենայն մարդկան,
որ կաղդուկն սու. քեզ. լու. ա-
զաչանաց մերոց ես նայողս
հոգւովդ զիսոնթեանն։
Որ զառաքմանակեաց ըզգաւսքն
բարձեր ի մարմնոյն Եկեղեցոյ,
մշանջենաւոր ցուցանելով նը-
մա զհոգեւորականն սուրբնա-
թիւն. լու. ազաչանաց։
Անխոնարհ ես բարեգութ.
բարեխօսութեամբ սրբոյս-հոյ
անարատս մօր քո ես կոսկ,
լու. ազաչանաց։

Սուրբ զԱստուածածնին եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, եւ զթացեալ կեցուսցէ զարարածս իւր. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Ալէլուիա, ալէլուիա։

Աստուած, յօդնել ինձ նայեաց, ի Տէր, յընկերել ինձ փութա.
Ամաչեսցին եւ յամօթ լիցին այք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս եւ ամաչեսցին այք խորհէին ինձ չար։

Գոյսոյ առաջելոյն յեփեսացւոց թղթոյն Է ընթերցուած

Եղբարք, ապաշխարք զձեզ եւ որ կապեալս եմ ի Տէր, արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք։
Ամենայն խոնարհութեամբ, եւ հեզութեամբ, եւ երկայնմտութեամբ՝ անտալ միմեանց սիրով։

Փութալ պահել զմիութեանն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան։
Մի մարմին՝ և մի հոգի. որպէս և կոչեցարուք ի մի լոյս կոչմանն ձերոյ։
Մի է Տէր, մի հաւատք, մի մկրտութիւն։
Մի Աստուած, և Հայր ամենեցուն, որ ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին ի մեզ։
Այլ իւրաքանչիւր ումեք ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի։

Ալէլուիա, ալէլուիա։

Դատ արա ինձ, Տէր, զի ես յամբծութեան իմում դնացի. ի Տէր յուսացայ զի մի՛ նդէց հիւանդ։

Ալէլուիա, Օրթի։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութեամբ լուարուք։
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի։
Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Գլորեալ է Աստ Աստուած։
Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ելեալ ինտի Յիսուս դնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի։

Եւ ահա՝ կին մի Քանանացի ի սահմանաց
անտի նոցա՝ ելեալ՝ աղաղակէր և ասէր.
Ողորմեա՛ց ինձ, Տէր, Որդի Դաւթի,
դուստր իմ չարաչար այսահարի։
Եւ նա ոչ ետ նմա պատասխանի։
Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղա-
չէին զնա և ասէին. արձակեա զնա՝ զի
աղաղակէ զհետ մեր։
Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք
առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորու-
սեալս տանն Իսրայէլի։
Եւ նա մատուցեալ, երկիր պագանէր նմա
և ասէր. Տէր, օգնեա՛ ինձ։
Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք
առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։
Եւ նա ասէ. այո՛, Տէր, քանզի և շունք
կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղա-
նոյ տեառն իւրեանց։
Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս
և ասէ. ո՛վ կին դու, մեծ են հաւատք
քո, եղիցի քեզ՝ որպէս և կամիս։
Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու։

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկ-
ութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։
Տէր ողորմեաս։

եւ ես վասն հիւանդիս (անուն) որ յաւ-
ստացեալ է կոչել զանուն Տեառն, զՏէր ողոր-
մեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Բարերար և մարդասէր Տէր, որ զամե-
նայն հիւանդութիւնս և զամենայն ախտս
բժշկես, բժշկեա (անուն) ծառայ
քո. յարո զսա ի մահճաց ցաւոց. այլ
արա ողորմութեամբ և գթութեամբ քոյ-
փարատեա ի սմանէ զամենայն տկա-
րութիւն և զհիւանդութիւն, զի յարու-
ցեալ քո կարող ձեռամբ, ծառայեսցէ
քեզ հանդերձ ամենայն զօրութեամբ։
Զի դու ես Աստուած՝ Աստուած ողոր-
մութեան և կեցուցիչ. և քեզ մատու-
ցանեմք զփառս Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ

Եւ ես խաղաղութեան զՏէր ապաչեսցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգ։

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ, ՀՓԻԼԻՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ։ (Տե՛ս յերես 150–152)։

ՇԱՐԱԿԱՆ

Գ.Զ. Զանազանական ըստ հոգեւոր ըստ գանձն յաստականացու կենցաղս ծախեցի այլ ասա՛ քեզ միայն պատմեմ բարեբար Փրկիչ, խնայեա՛ ի մեղանչեալ ծառայս։

Զյանկ հոգւոյ իմոյ բանկեցի և եղէ անբարեհաճ որմ. այլ ասա՛ քեզ մի։

Ասատանայ եղէ եւ արարէս զարմանելիս, պլատանկոսայս արարէս ձիմեանս. այլ անմիջաւորս և ա-

նոխակալ Փրկիչ, խնայեա ի մեղուցեալ։

Հառաչեցի զանլուսելի ըզհեծութիւն առ բարեգութն Աստուած, և լուաւ ինձ ի լեռնէ սրբոյ իւրմէ. և եհան ըզկեանս իմ յապականութենէ։

Աւետեա՛ց ըզմահու կարողութիւնն որ խաչեցաւ վասն մեր, և յարեաւ ի մեռելոց որպէս յամենայնի կարող. փրկելով ըզկեանս իմ յապա։

Աստուած է՛ որ ծընաւ ի միշտ կուսէն ի փրկութիւն ազգի մարդկան, լուսաւորելով ըզտիեզերս ի գիտութիւն ճըշ-

մարտութեան. և բարեբանեմք ըզնորս բարեգրութիւնն։ Զանարատն օրհնեցուք զԱստուածածինն որ կոյս մընաց յետ ծընանելեանն, և տարաւորովայնի զանսանելին ամենեցուն, զհամբնակիցսն Հօր և Ամենասուրբ Հոգւոյն։

ՔԱՐՈԶ

Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Ալէլուիա, ալէլուիա։

Յնձայցէք արդարք ի Տէր՝ զի ուղղաց վայել է օրհնութիւն, խոստովան եղերուք Տեառն օրհնութեամբ. տաստաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացէք նմա։ Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր զի բարի է, սաղմոս ասացէք նմա օրհնութեամբ։

Գողոսի առաքելոյն ի Հռովմայեցւոց թղթոյն է ընթերցուածս։

Պարտ է մեզ որ կարողս եմք՝ զտկարութիւն տկարացն բառնալ, և մի՝ անձանց հաճոյ լինել։

Այլ իւրաքանչիւր որ ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ի բարիս՝ վասն շինութեան։ Քանզի և Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղև, այլ որպէս և գրեալ է. նախատինք նախատչաց քոց անկան ի վերայ իմ։ Բայց որ ինչ գրեցաւն՝ ի մեր վարդապետութիւն գրեցաւ. զի համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք։ Այլ Աստուած համբերութեան և սփոփանաց մխիթարութեան տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի. զի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր առնիցէք զԱստուած, և զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Վասն որոյ ընկալարուք զմիմեանս, որպէս և Քրիստոս ընկալաւ զձեզ ի փառս Աստուծոյ։

Ալէլուիա, այլելուիա։

Աստուած, յանուանն քում կեցո զիս, և ի զօրութեանն քում իրաւ արար ինձ։

Ալէլուիա, Օրհնի։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութեամբ լուարուք։

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Գոսպուտէ։ Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Ասէ ցնոսա. ո՞վ է ի ձէնջ՝ որոյ իցէ բարեկամ, և երթայցէ առ նա ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. բարեկամ, տո՛ւր ինձ փախ երիս հաղանակս. զի բարեկամ իմ եկն առ իս յուղղոյ, և ոչինչ ունիմ դնել առաջի նորա։

Եւ նա ի ներքուստ ասիցէ պատասխանի և ասիցէ. մի՛ աշխատ առներ զիս, զի դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ

ինև կան յանկաղնի, ոչ կարեմ յառնել և տալ քեզ։

Ասեմ ձեզ. եթէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամութեանն, սակայն վասն ժուութեանն յարուցեալ տայցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ։

Եւ ես ասեմ ձեզ. խնդրեցէք՝ և տացի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բաղխեցէք՝ և բացցի ձեզ. զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղխէ՝ բացցի նմա։

Ցո՞ ոք ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխանակ ձկանն օ՞ձ տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձու, միթէ կարի՞ճ տայցէ նմա։

Իսկ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց. ո՞րչափ ևս առաւել Հայր ձեր յերկնից տացէ բարիս այնոցիկ՝ որք խնդրեն ի նմանէ։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեաս։

Եւ ևս վասն հիւանդիս (այս անուն) որ յաւ-

ասցեալ է կոչել զանուն Տեառն, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Բազումողորմ և բարերար Տէր, որ զօրացուցեր զմեզ ի ձեռն սրբոց առաքելոցն քահանայական աղօթիւք զհիւանդս բժշկել, աղաչեմք զքեզ, շնորհեա բժշկութիւն և փրկութիւն (այս անուն) *ծառայիս քո. փարատեցո զամենայն հիւանդութիւնս, և սրբեա զաղտեղութիւնս հոգւոյ և մարմնոյ ստրա մարդասիրութեամբ քով։ Եւ քեզ փառք և իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։

Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեանն քում, ըստ բազում գթութեանն քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

Փոխն լմա՜ ա՜։ (Տե՛ս յէջ՝ 150 – 152)։

ՇԱՐԱԿԱՆ

Գ.Կ. Քրիստոս Աստուած տա-
տուծոյ. ողորմեա՛ :
Անօրէնութեամբ ի մեղս երկ-
նեցայ զին մայր իմ, ապաշէտ
Փրկիչ. ողորմեա՛ :
Վիրաւորեալ մեղօք անկան-
նիմ առ քեզ Փրկիչ. մի՛ ան-
ակն տանիր. ողորմեա՛ :
Զե՞ղեկիցսի՛ն քեզ մատլեմ
Փրկիչ, որ կենդանար բանիւ
քո լուծեր զերկնելս մոհս.
փարատեա՛ և զմեզ զհիւանդա-
լեալսն. յոյս կենդանութեան
մեր, կենցո ըզմեզ :
Ո՛ր անմահապարգև քո մեռելու-
թեամբն աւերելով ընդդրունսն

զբժմոնց մեռուցեր ըստահ. կենդանարծեա՞ և զիս զմեզ զբ ըստեռեալս. յոյս կեն. Մարդ և ամենեն կոյս յեա ծընիցեն եան. որ մարմնով ծընար զարձակոնն ի կանգեց մահ. բարեխօս լեր վասն անձանց մերոց, փրկեալ ի սպառնալեաց գեհենեանն։

ՔԱՐՈԶ

Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, և իջանելոյ ի վերոյ մեր աղօրմութեան և գթութեան Տեառն Աստուծոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցուսցէ և ողորմեսցի։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Ալէլուիա, ալէլուիա։

Յարիցէ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա, փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

Զօրոսի առաւելոյն ի Հռոմայեցւոց թզթոյն է ընթերցուածս։

Աղաչեմ զձեզ, եղբարք, զքրիստոսքն Աստուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զիօսուն պաշտօնդ ձեր. և մի՝ կերպարանիք կերպարանօք աշխարհս այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ զլաւն, և եթէ զինչ են կամքն Աստուծոյ բարին և հաճոյն և կատարեալն։

Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ որ տրեալ են ինձ ամենայնի որ է ի ձեզ, մի՝ առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել ի զգաստանալ իւրաքանչիւր, որպէս և բաժանեաց Աստուած չափ հաւատոց։

Ալէլուիա, ալէլուիա։

Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին։

Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ և ի մօրուսն Ահարոնի, և ի մօրուացն իջանէ ի գրապանս զգեստու նորա։

Ալէլուիա, Օրթի։

Խաղաղութիւն ամենեցուն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Երկիւղածութեամբ լուարուք։

Սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Պատասխանեմ։ Ասէ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա. եթէ ունիցիք զհաւատսն Աստուծոյ, ամէն ասեմ ձեզ, որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ քարձի՛ր և անկի՛ր ի ծով, և ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատասցէ թէ զոր ասէն լինի, եղիցի նմա՝ զոր ինչ և ասիցէ։ Վասն այսորիկ ասեմ ձեզ. ամենայն ինչ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, և հաւատասցէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։ Եւ յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զումեքեարս և Հայրն ձեր որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր։

ՔԱՐՈԶ

Եւ եւ խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Եւ եւ վասն հիւանդիս (այս անուն) որ յուսացեալ է կոչել զանուն Տեառն, զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Տէր Աստուած մեր, որ նստիս ի վերայ քերովբէից և հայիս յանդունդս, հայեա՛ց (այս անուն) ծառայս քո ի բարձրութենէ սրբութեան քո, հեռացո՛ ի սմանէ զամենայն ցաւս և զամենայն աղտեղութիւնս, և տո՛ւր սմա զառողջութիւն զամենայն ուրբս կենաց իւրոց։ Եւ քեզ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ

Եւ եւ խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնեա՛ Տէր։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ։

Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։ Փոխն ըմն սաղ։ (Տե՛ս յերես 150 – 152)։

ԵԱՐԱԿԱՆ

Գ.Զ. Անկանիմ առաջի քո՝ և խընդրեմ զթութիւն յանցանացս իմոց. մի՛ անտես առներ Հա՛յր զաղաչանս իմ։

Աղաղակեմ որպէս մաքսաւորն, և հեղուլ զարտասուս իմ առաջի քո որպէս պառնիկն. մի՛ անտես առներ։

Յանդգնեալս թշնամանաց պարտեցայ, եւ ի գաղանի նեղութեանս բանտարկութիւն վիրաւորեցայ. մի՛ անտես առներ։

Յոյս կենդանութեան և փրկ-

կուլթեան իմոյ Տէ՛ր Աստուած
իմ, յիշեա զիս որպէս երբեմն
զԵզեկիայն. եւ դարձո՛ զհոգի
իմ ի դրանց դըժոխոց։
Որ կամաւոր մահուամբ քո՛
մեռա՛ցեր ըզմահ, Քրիստո՛ս
Աստուած, և լուսափա՛յլ յա-
րութեամբ քով կենա՛գործե-
ցեր զաշխարհս. կենագործեա՛
և զի՛ս զմեղօք ըզմեռեա՛լս։
Առ քեզ ապաւի՛նիմք սուրբ
Աստուածածին. բարեխօսեա՛
անդադա՛ր առ Որդի՛դ քո եւ
Աստուա՛ծ մեր, փրկել ըզմե՛զ
ի փորձութենէ՛ և յամենա՛յն
վըտանգից մերոց։

ՔԱՐՈԶ

Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր. ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։

ԱՂՕԹՔ

Ընկալ, Տէր, պաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին։

Ալէլուիա, ալէլուիա։

Որ բնակեալն է յօդնութիւն բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս հանդիցէ։

Յովհաննու առաքելոյն ի Կաթուղիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Եւ դուք օծութիւն ունիք առ ի սրբոյն, և գիտէք ամենեքին։

Ոչ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ թէ գիտէք զնա, և թէ՝ զի ամենայն ստութիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի։

Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ

եթէ Յիսուս չէ Քրիստոսն. նա իսկ է նեռն, որ ուրանայ զՀայր և զՈրդի։
Ամենայն որ ուրանայ զՈրդի, և աչ զՀայր ընդունի. իսկ որ խոստովանի զՈրդի, նա և զՀայր ընդունի։
Դուք զոր լուարուքն ի սկզբանէ՝ ի ձեզ մնակեսցէ. զի եթէ ի ձեզ մնակեսցէ զոր ի սկզբանէն լուարուք, և դուք յՈրդին և ի Հայր մնակեսջիք։
Եւ այս են ուսուցիքն՝ զոր ուսուցանեսց նա մեզ՝ զկեանսն յաւիտենականս։

Ալէլուիա, ալէլուիա։

Երանի ում թողութիւն եղև մեղաց, և ծածկեցան ամենայն յանցանք նորա։

Ալէլուիա, Սրբի։
Խաղաղութիւն ամենեցուն։
Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութեամբ լուարուք։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու։

Փառք քեզ Տէր Աստուած մեր։
Գոսպուտէ։ Աչ Աստուած։

Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Աղաչէր զնա սմին ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա. և մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ։

եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գիտաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ էիւ մի իւղոյ ազնուի, կայր յետոյ առ ոտս նորա, լայր եւ արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա, եւ հերով գլխոյ իւրոյ ջնջէր. եւ համբուրէր զոտս նորա, եւ օծանէր իւղովն։

Եւ տեսեալ փարիսեցւոյն որ կոչեաց զնա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ ոչ էր, ապա գիտէր թէ ո՞վ եւ ո՞րպիսի ոչ կին մերձենայ ի սա. զի մեղաւոր է։ Պատասխանի եւ Յիսուս եւ ասէ ցնա. Սիմոն, ունիմ ինչ ասել քեզ. եւ նա ասէ. ասա, վարդապե՛տ։

Եւ ասէ. երկու պարտապանք էին ուրուք փոխառուի. մին պարտ էր հինգ հարիւր դահեկան, եւ միւսն՝ յիսուն. եւ իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունց շնորհեաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ Սիմոն. ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն շնորհեաց։

Եւ նա ասէ ցնա. ուղիղ դատեցար։

Եւ դարձեալ ի կին կողմն, ասէ ցՍիմոն. տեսանո՞ս զայս կին. մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ հատուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, եւ հե-

բով իւրով ընչեաց. համբոյր մի դու ոչ
ետուր ինձ, սա ուստիկ յորմէհետէ մըտ-
եալ եմ՝ ոչ դադարեաց ի համբուրելոյ
զոտս իմ. իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա
իւղով անուշիւ էօծ։

Վասն որոյ ասեմ քեզ՝ Թո՛ղեալ լիցին
սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիր-
եաց. զի որում չատ Թողուցու՝ չատ սիրէ,
և որում սակաւ՝ սակաւ։

Եւ ասէ ցնա. Թողեալ լիցին քեզ մեղք քո։

Եւ սկսան որ բազմեալն էին ընդ նմա՝
ասել ընդ միտս իւրեանց. ո՛վ է սա՝ որ
զմեղս Թողու։

Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին
զքեզ, ե՛րթ ի խաղաղութիւն։

ՔԱՐՈԶ

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն ի վերուստ խաղաղութեան և փըր-
կութեան անձանց մերոց, զՏէր աղաչես-
ցուք։

Տէր ողորմեա։

Եւ ևս վասն հիւսնդիս (այս անուն) որ յու-
սացեալ է կոչել զանուն Տեառն, զՏէր
աղաչեսցուք։

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

ԱՂՕԹՔ

Գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր, որ ես բժիշկ բարի անձանց մերոց. որ գհիւանդութիւնս մեր բառնաս. որ քո վիրօք ամենեքեան բժշկեցաք։ Որ հովիւդ ես բարի, և խնդրող մոլորեալ ոչխարին։ Որ անձանց բեկելոց տաս մխիթարութիւն, և կեանս մահացելոց։ Որ զաղբիւր արեան տեառատեսին քղանցիւ հանդերձի քո բժշկեցեր։ Որ զդուստր Քանանացւոյն ի դժնդակ դիւացն ազատեցեր։ Որ զպարտս երկուց պարտապանացն շնորհեցեր, և մեղաւոր կնոջն զթողութիւն ետուր։ Որ զբժշկութիւն անդամալուծին պարգեւեցեր հանդերձ թողութեամբ մեղաց նորա։ Որ զմաքսաւորն բանիւ արդարացուցեր, և զաւազակն ի վերջին խոստովանութեան նորա ընկալար։ Որ զմեղս աշխարհի բարձեր, և ի խաչին բեւեռեցեր։ Զքեզ աղաչեմք և քեզ պաղատիմք, ներեա՛ և թող զանօրէնութիւնս և զմեղս սորա զկամայ և զակամայ,

զգիտութեան և զանգիտութեան, զոր ի գիշերի և զոր ի տուընջեան։ Այո՛, Տէր Աստուած, լո՛ւր ինձ մեղաւորիս ի պահուս յայսմիկ վասն (այս անուն) ծառայիս քո. անտես արա՛ իբրև անյիշաչար Աստուած զյանցանս սորա զամենայն։ Զբերան սորա քոյին օրհնութեամբդ լցո՛. զշրթունս սորա բա՛ց առ ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ. զձեռս սորա տարածեա՛ ի գործս պատուիրանաց քոց. զոտս սորա առ յընթացս Աւետարանին ուղղեա՛. և զամենայն անդամս սորա և զմիտս պարփակեա՛ քոյին շնորհօք։

Դու, Տէր Աստուած մեր, որ ի ձեռն սրբոց քոց առաքելոց ծանուցեր մեզ ասելով, թէ զոր կապիցէք ի վերայ երկրի՝ եղիցի կապեալ յերկինս. եւ դարձեալ, եթէ ումեք թողուցուք ըզմեղս՝ թողցին նմա։ Եւ որպէս լուար Եղեկիայ ի նեղութեան անձին իւրում ի ժամու մահուան նորա, և ոչ անտես արարեր զաղաչանս նորա, լո՛ւր և ինձ,

մեղաւոր և անարժան ծառայի քո, ի պահուս յայսմիկ։ Քանզի դու ես Տէր՝ որ եօթանասնեկի եօթն թողուլ՝ որք անկանին ի մեղս, հրամայեցեր քոյին մարդասիրութեամբ. ապաշաւելով ի վերայ չարեաց մերոց, և խնդալով ի վերայ դարձի կորուսելոց։

Տէր Աստուած մեր, որ մտեալ ի տուն Զաքէի՝ ասացեր. այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ. դու որպէս մարդասէր և բազումողորմ փրկիչ, արա՛ և այժմ փրկութիւն տանս այսորիկ. զի որպէս մեծութիւն քո, նոյնպէս և ողորմութիւն քո։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Այնժամ կէս է Քահանայից կալով յոչխարդին. և կէս է յԽրիմ. և Աստուածեցն եկեալ դնէ զԱստուածն է վերայ բլոյ հիանդին. և ասէ.

ԱՂՕԹՔ

Աստուած ամենակալ՝ արարիչ ամենայն

արարածոց. որ առաքեցեր յաշխարհ զմիածին Որդիդ քո, որ եկն և փրկեաց զտիեզերս ի մեղաց. և բժշկեաց զամենայն ախտս և զհիւանդութիւնս ժողովրդեան քո. ընկղմեաց զմահ, և փոխեաց զմեզ ի կեանս և յանմահութիւն։ Եւ այժմ աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր, դի՛ր զամենակարող աջ քո ի վերայ հիւանդիս այսորիկ, և բժշկեա՛ զսա ի ցաւոց իւրոց։ Զի զքեզ փառաւորեսցէ՝ զբժիշկդ հոգւոց և մարմնոց, և խոստովան լիցի ահեղ աստուածութիւն քո. զի քեզ վայել է փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուած յաւիտենական, որ իջեր ի ստորին կողմ երկրի և շնորհս ծաւալեալ սփռեցեր յարարածս քո։ Առաքեցեր և զերանելի առաքեալսն քո, հրաման տալով նոցա՝ բժշկել զամենայն ախտս և զհիւանդութիւնս ժողովրդեան քո։ Եւ արդ՝ ես ծառայս քո տկարս և անարժանս՝ դնեմ զձեռն իմ ի վերայ

հիւանդիս այսորիկ, և կարգամ զահեղ ասասուածութիւն քո, և խնդրեմ յառատ բարերարութենէդ քումմէ. առաքեա՛ զամենակարող զօրութիւն քո, և բժշկեա՛ զախտս և զհիւանդութիւնս ծառայիս քո այսորիկ՝ նշանաւ ամենայոյզթ խաչի քո, որով բարձեր զակարութիւն ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ։ Զի դու ես Աստուած մեր, և բժիշկ հոգւոց և մարմնոց ծառայից քոց, և փարատիչ ամենայն ախտաւորութեանց մերոց։ Եւ քեզ ընդ Հօր ամենակալի և ընդ Հոգւոյդ ճշմարտի՝ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ

Վասն հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ ողջոյնս քեզ փրկիչն մեր Քրիստոս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բշժկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց. և կատարեալ առողջութեամբ հաստատեսցէ

զամենեսեան ի մշանջենաւոր և յանոխտ կեանս։ Որ առաքեցաւ ի Հօրէ ի բժշկութիւն ազգի մարդկան՝ միածին Որդին Աստուծոյ. Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս. կեցուցէ և ողորմեսցի։

ԱՂՕԹՔ

Փարատեա՛ զցաւս և բժշկեա՛ զհիւանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ, Տէր Աստուած մեր. և շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն, նշանաւ ամենայոյզթ խաչի քո, որով բարձեր զոկարութիւն ազգի մարդկան և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ։ Դու ես կեանք մեր և փրկութիւն, բարերար և բազումողորմ Աստուած, որ միայն կարող ես թողուլ զմեղս, և մերժել զախտս և զհիւանդութիւնս ի մէնջ. որում յայտնի են պէտք կարեաց մերոց։ Պարգևիչդ բարեաց՝ պարգևեա՛ զառատ ողորմութիւն քո ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. յորոց հանապազ փառաւորեալ զովի ամենասուրբ Երրոր-

դուքիւնդ, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

ՔԱՐՈԶ

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ
ի Տեառնէ՝ զի զաղօթս զոնորս իւր
ասասցէ ի վերայ մեր. Տէրն ամենակալ
կեցուսցէ և զգթասցի։

ԱՂՕԹՔ

Թագաւոր խաղաղութեան՝ օգնական և
փրկիչ անձանց մերոց, Քրիստոս Աս-
տուած մեր, պարապետ պահեա՝ զժո-
ղովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և
պատուական խաչիւ քով ի խաղաղու-
թեան։ Փրկեա՝ յերեւելի և յաներեւոյթ
թշնամւոյն։ Արժանաւորեա՝ զոհու-
թեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և
ընդ Սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։
Հայր մեր որ յերկինս։